ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2022 թվականի N 216-Ա

ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հանրապետության Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջները և հաշվի առնելով Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր-մասնագետ գլխավոր-ճարտարապետ Ա. Աղաջանյանի 10.05.2022թ.-ի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 14/1 հասցեում գտնվող Սերյոժա Գարեգինի Բուդաղյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2433514 վկայական), 15 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման արհեստանոցի (սպասարկման համալիր) գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով հանդիսությունների սրահ՝ առանց ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի ու շին. թույլտվության:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. մայիսի 10
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2022 թվականի N 217-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՅԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և օրինական կառույցը գնելու վերաբերյալ Դավիթ Արշալույսի Բաբայանի կողմից գնման համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Մոմիկի փողոց 2/17 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 11.4 քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00211 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Դավիթ Արշալույսի Բաբայանին շինության համար 22447 ՀՀ դրամ և հողատարածքի համար 93722 ՀՀ դրամ արժեքով:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. մայիսի 10
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2022 թվականի N 218-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր ք., Ա. Միկոյան փողոց 12/1 հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (ավտոտնակի) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 17.01.2022թ.-ի թիվ 06-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր ք., Ա. Միկոյան փողոց 12/1 հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 32.3 քմ մակերեսով կառուցված գործառնական նշանակությամբ՝ ինքնակամ ավտոտնակը և դրա սպասարկման համար առանձնացված 0.00369 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման

հողատարածքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022NWQZOV) համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական: Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր ք., Ա. Միկոյան փողոց 12/1:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Բենիկ Կամսարի Զաքարյանին (նույնականացման քարտ՝ 001686849, տրված՝ 26.04.2014թ., 037-ի կողմից):

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը /վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք/ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. մայիսի 10
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2022 թվականի N 219-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 54-Ա, ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 89-Ա, ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի պահանջներով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով ինչպես նաև՝ Եղեգնաձոր համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի,

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:

2. Սույն որոշման ընդունմամբ՝ ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 25-ի՝ «Եղեգնաձոր համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 54-Ա, Գլաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 8-ի՝ «Գլաձոր համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 89-Ա և Մալիշկա համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 11-ի՝ «Մալիշկա համայնքում աղետների ռիսկի կառավարման խորհրդի ստեղծման մասին» թիվ 15-Ա որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 10
ք. Եղեգնաձոր

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
2022 թվականի մայիսի 10-ի թիվ 219-Ա որոշման

ԿԱԶՄ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Դավիթ Հարությունյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Վարդան Ավագյան /համայնքի ղեկավարի առաջին տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Մարինե Հովհաննիսյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանու անդամ՝ Գրիգոր Սարգսյան,
2) ավագանու անդամ՝ Արշավիր Բայաթյան,

ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Սուրեն Հարությունյան /Եղեգնաձորի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/ (համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ /Անտոն Անտոնյան ոստիկանության պետի տեղակալ/ (համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վահե Սարգսյան /«Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճան բաժնի պետ»/ (համաձայնությամբ),

դ. կապի պատասխանատու՝ Հովսեփ Հովսեփյան /«Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի հարավ բաժնի պետի ժ/պ/ (համաձայնությամբ),

ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Կարեն Ասատրյան /«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն/ (համաձայնությամբ),

զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Արմեն Հովհաննիսյան /Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/,

է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Գագիկ Սմբատյան /«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Արաքս մ/ճ-ի Եղեգնաձոր ցանցի պետ/ (համաձայնությամբ),

ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Արմեն Աղաջանյան /Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ/,

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Արթուր Հայրապետյան /«Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն/,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծնողների հարցերով զբաղվող պատասխանատու՝ Քրիստինե Պողոսյան /համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/:

Համայնքի ղեկավար՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
2022 թվականի մայիսի 10-ի թիվ 219-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Եղեգնաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Եղեգնաձորի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման հատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

Համայնքի ղեկավար՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2022 թվականի N 220-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը և քաղաքացի Միսակ Հայրապետի Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Միսակ Հայրապետի Հովհաննիսյանին (ծնված՝ 22.10.1941թ.), Սպարտակ Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 14.02.1968թ.), Սիրան Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 24.05.1969թ.), Նաիրա Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 03.02.1975թ.) և հանգուցյալ Ժուլետա Աբովի Մարգարյանին (մահացած՝ 12.04.2021թ.) համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողին (կադաստրային ծածկագիր՝ 10-015-0070-0011, սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 1730357) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գլաձոր, 7-րդ փողոց, 2 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 11
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2022 թվականի N 221-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը և քաղաքացի Միսակ Հայրապետի Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիներ Միսակ Հայրապետի Հովհաննիսյանին (ծնված՝ 22.10.1941թ.), Սպարտակ Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 14.02.1968թ.), Սիրան Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 24.05.1969թ.), Նաիրա Միսակի Հովհաննիսյանին (ծնված՝ 03.02.1975թ.) և հանգուցյալ Ժուլետա Աբովի Մարգարյանին (մահացած՝ 12.04.2021թ.) համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողին (կադաստրային ծածկագիր՝ 10-015-0008-0010, սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 1730358) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գլաձոր, 33-րդ փողոց, 45 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 11
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2022 թվականի N 222-Ա

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-111-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության, Հայաստանի Հանրապետության կառավարության 25.09.2015թ. թիվ 1112-Ն որոշման պահանջները և հիմք ընդունելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 04.05.2022թ.-ի թիվ 4 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Մարիա Էդիկի Դովլաթյանին առանց ծնողական խնամքի մնացած երեխա (հիմք՝ նոտարական վավերացմամբ երկու ծնողների համաձայնությունը, բժշկական էպիկրիզը և ներկայացված դիմումը):

2. Ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Մարիա Էդիկի Դովլաթյանին հատուկ մասնագիտացած մանկատանը տեղավորելու ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. մայիսի 12
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 223-Ա

0.00180 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0140- ծածկագրով, 0.00180 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց, 15/2 հողամաս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. մայիսի 13
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 224-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետը և քաղաքացի Շահեն Սերվանտեսի Գրիգորյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Շահեն Սերվանտեսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27042022-10-0025 վկայական) հողամասի՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք Կամոյի փողոց U-15 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց, 2/15 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. մայիսի 11
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2022 թվականի N 225-Ա

ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը և ԱՁ Կարապետ Մկրտչյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի Թանահատի փողոց 2-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող առևտրի սրահում (մակերեսը՝ 30 քառ. մ) ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար ԱՁ Կարապետ Մկրտչյանին տալ թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2022թ. մայիսի 13
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 226-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալ Գագիկ Նիկոլայի Խալաթյանին,հանգուցյալ Սեդա Նապոլեոնի Գրիգորյանին, Սիրան Գագիկի Խալաթյանին, Ռուզաննա Գագիկի խալաթյանին,Նիկոլայ Գագիկի խալաթյանին,Գարիկ Գագիկի Խալաթյանին,Աշխեն Գագիկի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և տնամերձը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2078003վկայական) վերահասցեավորել՝ տրամադրելով հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք.,Գ.Լևոնյան փողոց, 1-ին նրբանցք,1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2022թ. մայիսի 13
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 227-Ա

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետը և ԱՁ Շուշիկ Օհանյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Երևանյան խճուղի 13/1 հասցեում հեղուկ վառելիքի վաճառք իրականացնելու համար ԱՁ Շուշիկ Օհանյանին տալ թույլտվություն՝ 2022 թվականի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Եղեգնաձոր